Gardenia Lebanese Farms L.L.C.
Գարդենիա Լեբնիզ Ֆարմս ՍՊԸ

www.armeniapecan.com

26/03/2024

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Նաիրի համայնքի ղեկավար

պարոն Նորայր ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան,

Սույնով հայտնում ենք Ձեզ, որ «Գարդենիա Լեբնիզ ֆարմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գործում է Նաիրի համայնքում 2015 թվականից ու հանդիսանում է բարեխիղճ հարկատու և ներդրող:

Նաիրի համայնքում ընկերության կողմից արդեն իսկ հիմնվել է երկու այգի՝ շուրջ 30,000 ծառերով, արվել են ավելի քան 4 միլիարդ ՀՀ դրամի ներդրումներ:

«Գարդենիա Լեբնիզ ֆարմս» ընկերությունը նախապատրաստական աշխատանքներ է տանում ներդրումային նոր ծրագրի՝ Եղվարդ քաղաքի տարածքում 57 բնակելի տների շինարարության մեկնարկի համար: Նախատեսվում է տասնյակ նոր աշխատատեղեր բացել համայնքի բնակիչների համար, ինչպես նաև աջակցել քաղաքի այդ հատվածում անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծմանը:

Վերոնշյալից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գարդենիա Լեբնիզ ֆարմս» ՍՊԸ ծրագրերի համար ներդրումները ներգրավվում են Լիբանանից, ուստիև նոր տների արտաքին տեսքը համապատասխանելու է լիբանանյան ճարտարապետությանը, նաև նկատի ունենալով Հայաստանի և Լիբանանի միջև ավանդաբար բարեկամական հարաբերությունները, խնդրում ենք Ձեզ և Նաիրի համայնքի ավագանուն՝ որոշում ընդունել Եղվարդի նոր թաղամասը «Լիբանան թաղամաս» անվանակոչելու մասին:

Հարգանոք՝

Նիկոլա Աբու Ֆեյսալ

«Գարդենիա Լեբնիզ ֆարմս» ՍՊԸ տնօրեն


«ԼԻԲԱՆԱՆ» ԹԱՂԱՄԱՍ
0053
0002
0020
0003
0047
0058
0125
0126
0127
0128
0129
0130
0131
0132
0133
0134
0135
0136
0137
0138
0139
0140
0141
0142
0143
0144
0145
0146
0147
0148
0149
0150
0151
0152
0153
0154
0155
0156
0157
0158
0159
0160
0161
0162
0163
0164
0165
0166
0167
0168
0169
0170
0172
0173
0174
0175
0176
0177
0178
0179
0180
0181
0184
0541
0079

ԼԻԲԱՆԱՆ թաղամաս